ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հույս-Մոտոր ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Favorit	Favorit	Favorit	ООО Евразия Лубрикантс	Քսուք Լիտոլ-24, հակաշփումային, ջրակայուն, բազմաֆունկցիոնալ լիթիումային քսուք՝ նախատեսված տրանսպորտային միջոցների, հանգույցների, առանցքակալների, հոդակապերի և շփման այլ հանգույցների քսման համար: Քսուքը պետք է համապատասխանի ԳՕՍՏ 21150-87 կամ արտադրողի տեխնիկական փաստաթղթով Լիտոլ-24-ին ներկայացվող պահանջներին: Արտաքին տեսքը՝ միատարր քսուք՝ բաց դեղինից մինչև շագանակագույն երանգով, առանց մեխանիկական

					խառնուրդների և ջրի տեսանելի առկայության: Թանձրացուցիչը՝ լիթիումային: NLGI դասը՝ 3 կամ արտադրողի տեխնիկական փաստաթղթով Լիտոլ-24-ին համապատասխան: Աշխատանքային ջերմաստիճանային միջակայքը՝ առնվազն -40°C-ից մինչև +120°C: Կաթիլանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 185°C: Պենետրացիան 25°C-ի դեպքում՝ 220-250 × 0.1 մմ: Կոլոիդային կայունությունը՝ առանձնացված յուղի քանակը ոչ ավելի, քան 12%: Ջրի պարունակությունը՝ բացակա կամ ոչ ավելի, քան արտադրողի տեխնիկական փաստաթղթով սահմանված նորմը: Մեխանիկական խառնուրդները՝ բացակա: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փակ և չվնասված փաթեթավորմամբ: Փաթեթավորումը՝ 0.8 կգ, 1 կգ, 4 կգ, 8 կգ, 9 կգ, 17 կգ կամ 18 կգ տարաներով՝ ըստ մատակարարման հնարավորության և Պատվիրատուի պահանջվող ընդհանուր քանակի: Արտադրության ամսաթիվը՝ ոչ շուտ,

					քան 2026 թվականի հունվարի 1-ը։ Մասնակիցը հայտով պարտադիր ներկայացնում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, արտադրության երկիրը, փաթեթավորման ծավալը/քաշը, ինչպես նաև արտադրողի տեխնիկական թերթիկը կամ որակի անձնագիրը, որտեղ պետք է արտացոլված լինեն սույն տեխնիկական բնութագրով պահանջվող հիմնական ցուցանիշները։ Մատակարարվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը և տեխնիկական ցուցանիշները պետք է ամբողջությամբ համապատասխանեն մասնակցի հայտով ներկայացված ամբողջական նկարագրին և սույն տեխնիկական բնութագրին։ Այլ ապրանքային նշանի, մակնիշի կամ արտադրողի ապրանքի մատակարարումը չի թույլատրվում։ Պատվիրատուի մոտ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մատակարարը իր միջոցների հաշվին ապահովում է ապրանքի

					լաբորատոր փորձաքննությունը Պատվիրատուի կողմից նշված կամ հավատարմագրված լաբորատորիայում։ Փորձաքննությամբ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում ապրանքը համարվում է չմատակարարված, իսկ փորձաքննության, փոխարինման, տեղափոխման և այլ հարակից ծախսերը կրում է Մատակարարը։ Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացվում է Մատակարարի միջոցներով և հաշվին։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО УЙС-МОТОР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					